

ՄԱՐԿ

Տարեկան գինը 10 բուրգի, կէս տարվան 6 բուրգ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են.
Խմբագրանիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

Ի Տ Է Ր Տ ա ն Գ Ե ա լ

Ս Ա Ր Գ Ի Ս Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ե Ր Ի Ց Ե Ա Ն

Որք ու անտէր դաւանները՝ Աստուածատուրը, Վարդուհին, Սրբուհին, Տիգրանուհին, Արմենակը և Երանուհին, այլ և տիկին Արմենուհի Քալին և ան խնդրում են ազգականներին, բարեկամներին, ծանօթներին և յարգողներին, չնոր՝ բերել հանդուցեալ յուզարկաւորութեան, որքան որ, յունիսի 18-ին, ցերեկվայ ժամի 4-ին, Յիւրիանեան զառկայր, № 5 անից գէպի Եջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին Թաղումը տեղի կունենայ շարաթ օր, ամսին 19-ին:

(ո. չ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական կարծիքը պէտք է զուլի.—
ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գիւլի մե-
ծերը. Կովկասի հայոց Բարեգործական ընկերու-
թիւնը. Նամակ Ատարխանից. Նամակ Շու-
շուց. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նոր սերունդ.

ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ՊԵՏԲ Ե ԶՍՊԻ

Մենք ստիպված ենք մեզ զգուշ բողոքի
ձայն բարձրացնելու մի քայլային ախտի
դէմ, որի մասին չէ ընդունված խօսել,
բայց որը սկսում է տարածվել մեր կա-
նանց հասարակութեան շրջանում: մենք
պարտաւոր ենք համարում հրաւիրել հա-
սարակական կարծիքի ներգործական ազ-
դեցութիւնը՝ զսպելու մեր կանանց վը-
տանգաւոր և կորստաբեր վարմուն-
քից: Մեր խօսքը արհեստական կերպով
մանուկ վիժելու ախտի մասին է, որ
արդէն խել է բազմաթիւ զոհեր և շա-
րունակում է ընդարձակել իր կատաղի
հունձը: Մենք ստանում ենք զանգատներ
այդ մասին զանազան քաղաքներից և
տեսնում ենք նորի մեր շուրջը: Վեր-
ջին օրերս մեր քաղաքում զարձակ տեղի
ունեցան այդ տեսակ մի քանի տխուր
դէպքեր, որոնք և աւելի են տալիս դարձ-
նել այդ ցաւալի երեւոյթի վրա առանձին
ուշադրութիւն և գլխի հասարակական
կարծիքի գործակցութեան և միջամտու-
թեան:

Մենք շեշտում ենք հասարակական կար-
ծիքի գործակցութեան վրա այն պատճա-
րով:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ո Ր Ս Ե Ր ՈՒ Ն Ի

Այն այն երկու բառերը, այն տարբեր, որի
վրա դրված են բոլոր ազգերի յոյսերը: Այդ
երկու բառերը շատ քաղցր հնչում են իւրա-
բանիւր մարդու բերանում, այդ տարբեր գոյու-
թեամբ պայմանաւորված է նաև ազգերի գոյու-
թիւնը:

Նմէ մի ժողովուրդ ունի նոր սերունդ, կըրթ-
ված նոր դադախարներով, նոր ձգտումներով,
նոր հայեացքներով, ընդունակ անձնակաճը դո-
հեւր ժողովրդի ընդհանրութեան շահերին, այդ
ժողովրդի ապագան ապահովված է: Նմէ մի
սերունդ կըրթվել է սխտեմատիկաբար, զար-
գացման աստիճաններով, եթէ նա դաստիարակ-
վել է նախ իր ընտանիքում, իր մայրենի շրջա-
նում, սկզբնական ուսումը ստացել է բարեկարգ
տարրական դպրոցում և ուսումնասիրել է բա-
ցի իր լեզուից այլ և այլ լեզուներ և համա-
մարդկային գաղափարներ, նա ընդունակ կը լինի
իր միտքի կատարելու, այդպիսի սերունդը
պիտանի կը լինի և իւրայիններ և ընդհան-
րութեան համար:

Բայց ինչպէս է արդեօք մեր մէջ նոր սերուն-
դը. նա համապատասխանում է վերը բերած պա-
հանջներին թէ ոչ: Դրական պատասխան մենք
գիտաբարնում ենք տալ. նոր սերունդի այն մե-
ծամասնութիւնը, որը և պատկանում է բուն ժո-
ղովրդին, շատ քիչ կըրթվեն և ստանում և թե-
րի կերպով դուրս է գալիս ու մտնում կարելի-
ների ծանր բեռի տակ, օրապահիկ կաշկան-
դումներ խորքը:—Նրանք քիչ է տրված, պահան-
ջելու քիչ է իրաւունք ունենք: Իսկ ինչ վե-
րաբերում է այն մասին, որին շատ է տրված և
որից շատ է իրաւունք ունենք պահանջելու, այդ
տեղ խօսում են իրանք դառն փաստերը: Վեր-
ջին տարիները մասուլի մէջ ինքնագովութիւն-
ների և կամ մեղմացուցիչ պատճառաբանու-
թիւնների դէմ, հրապարակ են գալիս ուսա-
նողներ իրանց անողջ մտքակներով. յաճախ
լսվում են ուսանողների բերանից նախադի-
զէպի ուսանողութիւնը, այն ուսանողութիւնը,
որը հակառակ իր կուլման բարձրութեան, ենթարկ-
ված է զանազան մոլութիւնների: Համալսարա-
նում նա քաջ է գալիս այս և այն տեղ, զուար-
ճութիւնները խում են նրանից հանգին ժամա-
նակ. նայն իսկ բարեբարութեւն ուսանողներ շատ
գիշերներ լուսացնում են զուարճութիւնների
մէջ: Այդ մի և նոյն ուսանողութիւնը նոյն
կեանքն է վարում ամառվայ արձակուրդներին,
հայրենիք վերադարձած ժամանակ. քէֆն ու

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Գ Ո Ր

Քաղաքական արկածախնդրութիւնների և մա-
նաւանդ միլիտարիզմի ամենաթշուառ գոհը Նե-
րոպայում Բոտալան է: Մշտական աղքատու-
թիւնից, հեշտաւոր հարկերի պատճառած սովից
հալումաշ դարձած երկրը այժմ վեր է կացել և
դժբախտութեան մի ծայրայեղ պատկերով ցոյց
է տալիս աշխարհին, թէ ինչ անագին բարեբա-
րութիւններ կարող է անել Հաւաքայի կոնֆե-
րենցիան, եթէ ազգերի ներկայացուցիչները,
որոնք հաւաքված են այնտեղ, մի քիչ մոռանան
պատերազմական Բանդին խռնել ծնելը և
ժողովուրդների հեծեմանը ու լացը լսելու բա-
րենաճութիւնն ունենան: «НОВОСТ» լրագրի թղ-
թակիցը Նեպոլից գրում է, որ այս տարի
Բոտալան, առանց այն էլ քաղցած ու մերկ, են-
թարկված կը լինի իսկական սովի արհաւիրքնե-
րին: Բնական պատահարները, կարկուտ, անձ-
րև, քամիներ փչացրել են ծառատունկերն ու
ցանքերը և ազգաբնակչութիւնը, որի զիլաւոր
պարագանքը երկրագործութիւնն է, անկանելի
գրութեան մէջ է ընկել: Երկու միլիոն սովա-
տունջներ ունի այժմ Բոտալան:

Ազգաբնակչութիւնը, ինչպէս մենք լսեցինք
ակաւատներէրց, մի քանի տեղ կանգնած է
քաղաքային և գաւառական վարչութիւնների
մօտ, անբարեբաղ ողորմութիւն, հաց, նպաստ.
մի քանի տեղերում, արտասուցք թափելով,
գնում է երկրպագելու տեղական սուրբերին
և հրաշագործ պատկերներին. իսկ մի քանի
տեղերում էլ նա, ըմբացած, սովի տանջանք-
ներն է տանում, արտասուցքներ կուլ տա-
լով: Տեղական իշխանութիւնները, նախադա-
պետները, քաղաքագլուխները, պատգամաւոր-
ներ ժողովի անդամները, սենատորները հե-
ռագիւրներ են ուղարկում միմիայնութեան,
պնդելով որ անհրաժեշտ է անյապաղ մի կտոր
հաց ուղարկել:

Մի կտոր հաց... Հէջն այդ բանն է, որ ի-
տալական կառավարութիւնը միշտ խել է իր
ժողովրդից և նրանով առել է հրացան ու թըն-
դանօթ, որոնք անցնել տարի այնքան «խնա-
ւի» գործեր կատարեցին Միլանում, երբ սոված
ժողովուրդը անկարգութիւններ սկսեց, իսկ կա-
ռավարութիւնը այդ սովատանջների դանդաղ
վրա փորձեց նոր տեսակ գնդակների զարհու-
րելի ուժով: Այժմ հաց են ուղարկում նրանից: Ռուս
լրագրի թղթակիցը ասում է.

Առ այժմ Հուովից քիչ միլիարդական պա-
տասխաններ են ստացվում. երկու միլիոն
սովատանջների համար մի կտոր հաց առնե-
լու փող չը կայ, ասում են այնտեղից, բայց
սպասեցէք, մենք կաշխատենք կարգադրել, որ

գինին, փողն ու թղթախաղն է նրա երեք ամիս-
ների բանը ու գործը: Զիշդ է, կան անհատներ,
որոնք բարձր են կանգնած ընդհանրութիւնից.
բայց դրանք այնպիսի աննշան տօկոս են կաղ-
մուծ, որ արատը մնում է ընդհանրութեան
վրայից չը սրբված:

Ուսանողը այդ երեք ամիսները հասկանում է
միայն քէֆի ու զուարճութեան ամիսներ. նրան
չեն հետաքրքրում ոչ ժողովուրդը և ոչ էլ նրա
շահերը. ուսանողը դէպի հասարակութիւնը ան-
տարբեր վերաբերվելով հանդիք՝ մնում է մեծա-
միտ կարծիքի, յաւակնում է ժողովրդի լուսաւո-
րելը համարվելու:

Բայց ինչի է այդպէս, ինչի արդեօք փոխա-
նակ ուսանողը ժողովրդի մէջ մտնելու, նրա
կեանքը ուսումնասիրելու և իր ապագայ գոր-
ծունեութեան համար պատրաստվելու, ժամա-
նակը սպասում է դատարկաբանութիւններով—
այս ուշադրութեան արժանի խնդիր է:

Մեր ուսանողութեանը պակասում է ամենա-
էականը. նա զուրկ է այն կրթութիւնից, այն դաս-
տիարակութիւնից, որը կոչվում է հարազատ,
առանց որի չը կայ ոչ սիրտ, ոչ զգացմունք:
Այժման մեր ուսանողութիւնը բոլորովին
չէ հետաքրքրվում մեր գրականութեանը, մեր
մամուլով. շատերը դրանից հայեքին գրել ու
կարդալ չը գիտեն, կան մինչև անգամ ու-
սանողներ, որոնք օտարաբան են մայրենի շըր-

առ. այժմ հարկեր չը հաւաքեն: Իսկ քաղա-
քանդ եղած երկրի վրա ազաւանների պէս
պտպտ են գալիս strozzini-ները (վիշապ օ-
ձեր), այսինքն հարստահարող վաշխաւունե-
րը, Բոտալան, նրա քաղաքի և գիւղի այս
ստեղծել խոցը...

Այսպէս է պատժում զինուորական պաշ-
տամունքը...

Բոտալայից անցնելը մի այլ երկիր, որ
նոյնպէս պատժված է, և ինչպէս սաստիկ, անո-
ղորմ կերպով: Դա Թիւրքիան է, այն պետու-
թիւնը, որ սրով բարձրացել է և այժմ էլ սրից
ընկնում է: Ծարի չէ անցնում, որ այնտեղ Ալ-
լանի ստուերի զինուորները կուլ, արհեստե-
ղութիւն չանեն: Ծարին էլ երկար ժամանակ է
և կարելի է ասել թէ նոյն իսկ ամիս էլ չէ
անցնում, որ Օսմանեան երկրում վաւոռի ծուխ
չը բարձրանայ: Եւ անա երկրի դրութիւնը, որ
նկարում է «Петерб. Вѣдомостѣ» լրագրի Կ.
Պոլսի թղթակիցը.

Ականջ դնելով Թիւրքական ձայներին, դը-
ժուար չէ նկատել, որ ժողովուրդը սկսել է
աչք բաց անել և տեսնել դառն իրականու-
թիւնը ու ստիպել կարիքը: Մայրը սկսել է
խորին մտաոնողութեամբ ականջ դնել իր որ-
դու ցաւալին հեծեմանքներին, որ դանդաւո-
րում է անողորմ քաղցածութիւնից, տղամար-
դի հոգին ցաւում է, տեսնելով իր ամուսնու
զղզված և ողորմելի կերպարանքը. նրա գե-
ղեցիկ մարմինը ծածկող ցնցոտիները յաճախ
հարկադրում են տղամարդին անկողն անէծե-
ներ թափել կառավարութեան հայեքին, որ
հինգերորդ ամիսն է ուժեղ չէ տալիս և նա
այդպիսով չէ կարողանում խոտաւցած շապի-
կան առնել իր կնոյ համար. մեծաւորը այլ
ևս չէ վերցվում իր ստորադրեալի դանդաւո-
ներից, այն ստորադրեալի, որ հաց է ուղարկ,
իր քրտինքով աշխատած հացը: Հրամանա-
տարի բերանը չէ գործում նկատողութիւն անել
ստորադրեալ օֆիցերին, որ կանգնած է նրա
առաջ մի համազգեստում, որ յիշեցնում է
1812 թ. ականի ֆրանսիական զորքերի նա-
հանջման ժամանակները: Նա, հրամանատարը,
սկսել է նկատել առնել, որ անմոտութիւն է
վաշխութիւն, մաքրութիւն պահանջել մի օ-
ֆիցերից, որ հինգ ամիսը մի անգամ ստա-
նում է 200 զուռ (16 բուրգ) և ծանրա-
բեռնված է մի քանի հատ կանանցից ու երե-
խաների մի կողմից բաղկացած ընտանիքով:
Մի խօսքով, Թիւրքիայի վրա կանգնած է հե-
ծեմանքը, տարածվում է տրտմանք, որ, միտ-
նելով հասարակութեան բոլոր խաւերը, ծանր
տպաւորութիւն է թողնում և վախեր է ներ-
շնում վաղվայ օրի մասին...

Երկրորդ պատժում հասկացել են այդ
բանը: Եւ այնտեղ հնարել են այն ծարը, որ
սովութան խոհանոցից բաժիններ են ուղարկվում
քաղցածներին: Բայց այդ խոհանոցային առա-
տուրթիւնը, թղթակցի կարծիքով, չի օգնի:

Չանից. իսկ մի տարր, որը չէ հետաքրքր-
վում ժողովրդի կարիքներով, նրա մտաւորով և
ձգտումներով, շատ պարզ է, նա զուրկ կը լինի
նաև հարազատ զգացմունքներից. իսկ մի տարր,
որը անսիրտ ու անտարբեր է դէպի ժողովուրդը,
նա որքան պիտանի մարդ կը լինի արդեօք
առելի ընդարձակ շրջանի համար: Ի հարկէ, նա
անպէտք է թէ մէկի և թէ միւսի համար. նրա բերա-
նից լսվող զանազան դիտմանքն ու փիլիսոփայա-
կան թէօրեանքի մատին եղած ճառերը լոկ հնչիւն-
ներ են մնում. այդպիսի տարրը մի դաւանաւոր
միայն—կարիքաւ... Այս մենք սրանով ենք բա-
ցատրում այն տխուր երեւոյթը, որ մեր ուսանո-
ղութեան մի որոշ տոկոսը ընկած է միայն անձ-
նական հաճոյքների ետևից. նա կապվում է մէկի
հետ, մնում այնտեղ, որտեղ քաղցը գցել է որ և
է պատճառով, և նա այդպիսով դանդաւում է մի
նոր հասարակութեան անդամ, նա մեռնում է
իր ժողովրդի համար, նա զղվում է իր հարա-
զատների կեանքից—նրանց ընտանեկան նիւտ
ու կացից—և երկվայ դիւղացին խորշում է իր
գիւղից, նա գայեցող չէ անում իր ծնողներ
մօտ դառնալ: Այս այդպէս այն տարրը, որի
վրա դրված են մեծ յոյսեր, կորցնում է ժողո-
վրդի համար էլ գոյութեան իրաւունքը:

Ա—Դօ

Ժողովուրդը սովորած է ոչ միայն ֆիզիքա-
պէս, այլ և բարոյապէս, հոգեպէս. դա մի սով
է, որ չեն կարող յազդեցնել ձաշերը, թէ
սովորական կան խոհանոցներում պատրաստ-
ված լինեն:

Բայց այսպիսի բաները ձախտադրական,
սովորական են Թիւրքիայի համար: Երբէք այդ
երկրիւր չէ դէն դրեւ հրացանի փողը, որպէս զի
հասկանայ, թէ ժողովուրդը հացի համ էլ է ու-
զում առնել: Թիւրքական քաղաքներում թիւրքները
կշտացրել են ամենքին, և մի բան, որ այդ
խեղճ երկրում երազների կարգին է անցել, որի
համար միլիոնաւոր շրթունքներ են ձաքձաքում
—մի կտոր հալալ հացն է:

*

Մէկի մասին խօսելիս, անյարմար է չը մի-
շել նրա բարեկամին: Թիւրքիայի ողորդութեան
աղբիւրը Գերմանիան է: Եւ զարմանալի չէ:
Ազգերը ապագայի վրա հասցան, հրաշալի յոյ-
սեր ունեն: Շատ ֆանտաստիկական գուշակու-
թիւններ են անում ապագայի մասին և այդ
գուշակութիւնները մէջ դուրս է բերվում մի եղ-
բայրացած մարդկութիւն, մի համաշխարհային
ընտանիք՝ հիմնված հաւատարմութեան, ընդհա-
նոր բարօրութեան վրա: Նորերումս Գերմա-
նիայում լոյս տեսաւ մի գրուածք, որի մէջ հե-
ղինակը գուշակում է, թէ ինչ կը լինի 2000
թւականին: Եւ երևակայեցէք: Երկաթի և ա-
րծան դաղափարի վրա մնված գերմանացին գու-
շակում է, որ այդ ժամանակ զինուորական ար-
հեստը իր ամենաբարձր կատարելագործութեան
կը լինի հասած: Ահա գերմանական ինժեքները
իդէալը: Ապագայի մէջ տեսնել այն սոսկալի
գոթագործութեան ամենամեծ գարգացումը, որի
տակ այսօր հեծում են այնքան ազգեր... Բա-
ցատրութիւնները աւելորդ են:

Գ Ի Ի Ղ Ի Մ Ե Ծ Ե Բ Ը (Նամակ Նուխուց)

Ով երկար ապրել է գիւղում, նա անշուշտ
լաւ կիմանայ, որ շատ դժուար է ապրել գիւղ-
ում և չը խառնվել գիւղացի ժողովրդի գործե-
րին, նրա աւօրեայ հոգս ու ցաւերին, մանա-
ւանդ երբ նա բնից շատից կարգացած, ինտե-
լիգենտ մարդ է: Հէնց որ դուք սկսում էք հե-
տաքերով գիւղական հարցերով, արդէն շատ
չանցած՝ զգում էք ձեզ շրջապատված մի կարգ
թշնամիներով: Նրանց մէջ առաջին տեղը բռ-
նում են անշուշտ «բէթլուդէքը», որոնք մի
առանձին հպարտութեամբ իրանց համարում են
գիւղի աստուածները:

Գիւղի հաշիւը դրանց ձեռքումն է, «խարշու-
թովու», կու ու բէկաւու՝ միակ տնտեսը, ծախս
անողը և հաշուառնը դրանք են: Բոլորովին ա-
ղատ լինելով մշակութեան աշխատանքներից, վար
ու ցանքից, որ կազմում է նրանց տան փողը եղ-
բայների և հօրեղբոր որդիների բան ու գոր-
ծեր, նրանք ամբողջապէս նուիրված են գիւղի
կառավարութեան գործին: Ներկայացնելով ի-
րանցից մի-մի գովառներ, նրանք սնվում, պա-
րարտանում են զուտ հասարակութեան հաշ-
ւին: Նրանք շատ հազիւ են իրանց տանը նստում:
Շարունակ այստեղ-այնտեղ և մի քանիսն իր
վէճը կարգադրելով, հողի հարցը որոշելով՝ մաք-
րազարդում են առատ ձաշերն ու զօր տա-
լիս փողերի ձաքալին: Բայց դա ոչինչ, ի հարկէ:
Նրանց ձեռքին են լինում համարեա միշտ լաւ
հողերը, արօտները, տիրապետում ու վարում
են չնչից շատ ու շատ աւել հողեր և, որ ա-
մենից աչքը ընկնում է, ոչ մի կօպէկ հողի հարկ
չեն մտցնում ընդհանուր հարկահանութեան մէջ:
Ջարմանալու ոչինչ չը կայ: Գիւղի հաշիւը ի-
րանց ձեռքումն է: Կոմպոսիս կազմելով խղճի
և ընկերների հետ՝ իրանց «թովլին» էլ զգում
են հասարակութեան վրին: Բնից մեծ բան է մի
30 կամ 40 կ., որ դրանով ընկնում է ամեն մի
ծխի վրա: Եւ գիւղում տասնեակ ընտանիքներ
տարիներով ապրպէս մնում են հարկից ազատ,
նայելով թէ որքան տնական է լինում իրանց
զօրութիւնը:

Այդ էլ դեռ ոչինչ: Այնպէս համարէք, թէ
այդ էլ նրանց նեղութեան վարձն է, նեղու-
թիւն, որի համար շատ-շատերն են գլուխ պատ-
ռում իրար ձեռքից խելու համար: Ջարմանա-
լին այն է, որ այդ անբարոյական տիրապե-
տի մէկը կամ միւսը իրաւունք է համարում իրան
որչ համայնքի կողմից խօսելու, յաճախ առանց
որ և է ընտրութեան: Երբ մի աղէտ է պատա-
հում, որի համար մեծ փողեր պիտի մէջ գցել,
օրինակ, հողի հարց է, ջրի կուլ է, հասարա-
կական մի ինչ որ կապալ է, դպրոցի, հիւան-
դանոցի չէնք է, այդ դէպքերում նրանց «դօ-
բանն» է: Հմուտ վերաբերմի պէս առաջ են գա-
լիս և դանակը ձեռք առնում, կտրում անմեղ

զին—հասարակաց շահերը, չաղ մասերը ջրի
դնում իրանց համար և մնացածը ալանդակելով՝
թողնում են Աստուծու կամքին: Այդպիսի մի
անդամահատութիւնից յետոյ գիւղի խելը եր-
կար տարիներ գլուխ չէ գալիս:

Հաստ փողերի հետ ունենալով աւելի հաստ
զրուհներ, նրանք շատ էլ զօր չեն տալիս խելը-
նեքին ու լուծ խղճի ձայնը. անհաշիւ ծախսեր
են անում ու յաճախ կրկնում՝ «ինչ դնում է,
այդուց է՝ դնում, այդպէս ինչն է դնում»
Թրքական անմիտ ու անխիղճ առածը: Առատ
կաշառներ են տալիս սրան-նրան. շատ անգամ
ի դուր փողեր են վատնում: Որքան ծախս շատ
ցոյց տան, հաշիւը որքան խառն լինի, այնքան
էլ հեշտ է միջից բան ուտելը: Այդ արդէն լաւ
են հասկանում: Մշակ գիւղացին ոչ միջոց, ոչ
էլ հնարաւորութիւն ունի վերահասու լինելու:
Ամբողջ տարին նա իր գործի, իր արիւն-քրտին-
քի, իր վար ու ցանքի, եղն ու գոմէշի հոգին է
քաշում, և երբ մի օր նկատում է իր տարեկան
«թովլին» եռապատկած, եթէ աւելի չափեց,
մնում է շուտաւր: Հէնց որ խօսք էք բաց ա-
նում նրանց հետ այդ մասին, խելով լուծ էք
ամեն կողմից. «մեզ քանդեցին այդ անիրաւե-
րը»: Խօսեցէք միջոցների մասին, միջոցներ, ո-
րոնք կարող լինեն արելը հանդիսանալու, որ
«անիրաւեցը» հասարակութեան հաշիւով չը
տուգացնեն իրանց փողերը: Կանօնաւոր հաշիւ,
հաշուառն ու ծախսարար, «թովլին» հաւաքելու
աւելի յարմար մի միջոց, և սրանց նման մի
քանի բաներ առեցէք, և բաւական է. դուք կը
չահէք այնպիսի ստոր ու անաւօթ թշնամիներ,
որոնք չեն քաշվի, երգում կուտեն ձեզ մե-
ղաբերելու այնպիսի յանցանքների մէջ, որոն-
ցից շատ վատ հոտ է գալիս, օրինակ, հաւատի,
օրէնքի հայտնադն և այլն:

Ուրեմն, այսպէս, եթէ երբեք փակեցէք այդ
բէթլուդէքների արարները, չը պէտք է մո-
ռնալու և այն, որ նրանք բացի ներկական վե-
նասից, հազիւն բարոյական վնաս են տալիս
հասարակութեան: Նրանք հանդէս են գալիս
որպէս պարագլուխներ, որ ծծում են աշխատա-
ւորի կենցաղը, փարթամանում են ուրիշի հաշ-
ւին, և իրանց են նպատակների համար պահում
են մոլթ ու կասկածաւոր վարքի տէր մարդիկ:
Նրանք միշտ և ամեն տեղ հսկայ խոշորոտ են
ամեն մի պարզ բանի, ամեն բարի ձգտումի և
առհասարակ այն հարցերին, որոնք ներսում են
թուլացնելու նրանց ոյժը: Այդպիսիները բոլոր-
ովին վնասակար անդամներ են հասարակու-
թեան: Նրանց պէտք է կտրել ու դէն չպրտել
ամբողջ միջոց:

ԿՈՎԱՍՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ- ԹԻՒՆԸ

Թուրքիայի 6-ին և 13-ին Կովկասի հայոց Բարե-
գործական ընկերութիւնը Թիֆլիսում ունեցաւ
եկրու արտադրութիւններ՝ թէ ընթացիկ գոր-
ծեր կարգադրելու (հաշիւների ընտրութիւն և
հաստատութիւն) և թէ մի քանի նոր հարցեր
վճարելու համար: Ժողովները բաղմամբով չէին:
Խնչպէս հաղորդել էինք, առաջին ընդհանուր
ժողովը, լսելով որ Կովկասի ծիւղը ուղում է
իր կամքով վերջ դնել իր գոյութեան, յանձնա-
րարեց խորհրդին՝ յորդոր կարգալ տեղական
վարչութեան, որ աշխատեն պահպանել ծիւղի
գոյութիւնը: Նոյն ժողովը, Վաղարշապատի ճիւղ-
ի առաջարկութեամբ, պատաւոր անդամ ընտ-
րեց Կովկասի Հայոց Բարեգործական ընկերու-
թեան և նրա Վաղարշապատի ճիւղի հիմնադիր
բժշկապետ Բ. Նաւասարդեանին: Միւս հարցը,
որ վերաբերում էր Խուղաղեանի նուիրած քաղ-
վանաւարայի շինութեան, յետագից յաջորդ ժո-
ղովին, որ տեղի ունեցաւ յունիսի 13-ին: Այդ
ժողովում նրա կարողացվեց և հաստատվեց նախ-
ընթաց ժողովի արձանագործութիւնը և ապա, ի
միջի այլոց, ընտրեցին հետեւեալ հարցերը.

1) Մի քանի մասնաւոր անձինք, ինչպէս, օ-
րինակ, պ. Սմբատ Շահադիեան, ճարտարա-
պետ Կարապետեան պահանջել էին խորհրդից
վերադարձնել իրանց տունը յատուկ գումար-
ները: Այդպիսի պահանջներ արել էին և ընկե-
րութեան ճիւղերի վարչութիւններից մի քանի-
սը: Ժողովը վճեց. իրաւունք տալ խորհրդին
վերադարձնել այն յատուկ գումարները իր մա-
նանկին:

2) Արաւելայի ճիւղը հարց էր բարձրացրել
այն մասին, թէ ինչ պէտք է անել այն անձեռ-
մխել գումարը, որ ընկերութեան գոյութեան
ընթացքում գոյացել է խորհրդի և բոլոր ճիւղե-
րի տարեկան մուտքի 5%-ից և որը պահվում է
կենտրոնում: Ընդհանուր ժողովը վճեց խօսք
չը բանալ այդ մասին, քանի որ այդպիսի հարց
կարելի է դնել այն ժամանակ, երբ ընկերու-
թիւնը փակվում է, մինչդեռ այժմ ընկերութիւն-

նը միայն կերպարանափոխում է նոր կանօնա-
դրութեամբ:

3) Խորհուրդը խնդրել էր ընդհանուր ժողովից
պարզել, թէ ինչպէս պէտք է վարվել ընկերու-
թեան գրադարան-ընթերցարանի հետ: Ընդհանուր
ժողովը որոշեց՝ պահել որքան ժամանակ կարելի
է, իսկ այնուհետև չը վաճառել, այլ նուիրել որ
և է հիմնարկութեան: Խորհրդին է թողնված ո-
րոշել այն ժամանակը, երբ պէտք է գործարկել
այդ վճիռը:

4) Խուղաղեանի նուիրած քաղվանաւարայի վե-
րաշինութեան հարցը վերջնական լուծում չը
ստացաւ: Ժողովը յանձնեց խորհրդին՝ կազմել
մանրամասն հաշիւ և մրցանակ նշանակել լաւա-
գոյն մակարդակի համար, նշանակելով մինչև
1500 բուրջի վարձատրութիւն:

Ընկերութեան խորհրդի մէջ անցեալ շաբաթ
տեղի ունեցաւ հետեւեալ փոփոխութիւնը. նա-
խագահի պաշտօնից հրաժարվեց պ. Ալեքսանդր
Անանեան, որ 1881 թւից, այսինքն 18 տարվայ
ընթացքում վարում էր այդ պաշտօնը անփո-
փոխ: Պ. Անանեանի տեղ նախագահ ընտրվեց
պ. Ալեքսանդր Մէլիք-Աղաբեան:

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Թուրքիայի 5-ին

Երկու տարի է, որ մեր օրիորդաց դպրոցը,
համաձայն վերջին բարձրագոյն կարգադրու-
թեան, որ տեղի ունեցաւ բոլոր հայ ծիւղական
դպրոցների վերաբերմամբ, անցած է լուսաւո-
րութեան միջնատրութեան իշխանութեան տակ,
բայց դեռ մինչև այժմ նա մի որոշ տիպ չէ
ընդունած: Սրա պատճառը հետեւեան է: Մեր
օրիորդաց դպրոցը, բաղկացած լինելով չորս
հիմնական և երեք պատրաստական դասարան-
ներից, շատ բարձր էր ծիւղական դպրոցներից
իր աւանդելը առարկաներով, ուստի և նոր
կարգադրութիւնից յետոյ, դիրեկտայի կողմից
առաջարկութիւն եղաւ, թէ ինչ տեսակ դպրոց
է կամենում ունենալ հայ հասարակութիւնը,
սրա հետ և առաջարկվեց կազմել դպրոցի կա-
նօնադրութիւնը:

Այդ առիթով դեռ անցեալ տարի հայ հասա-
րակութեան կողմից մշակվեց կանօնադրութիւն
և ուղարկվեց պաշտօնաւոր հաստատութեան
համար: Այդ կանօնադրութիւնով կամք էր
յայտնվում ունենալ 4 դասարանեան մի դպրոց,
գրեթէ նոյն ձևով, ինչ որ առաջ էր:

Այժմ այդ կանօնադրութիւնը փոփոխված յետ
է ստացվել, ուստի և պէտք եղաւ կազմել կա-
նօնադրութիւնը նորից, աչքի առաջ ունենալով,
ի հարկէ, փոփոխութիւնները:

Ահա այդ առիթով, երէկ, ամիս 4-ին, տեղի
ունեցաւ ժողով նոյն դպրոցի դահլիճում: Ժողո-
վին նախագահում էր տեղիս եկեղեցիների գոր-
ծակալ Գէորգ քահանայ Մկրտումեանց:

Ժողովում վերոյիշալ գործին վերաբերված
թղթերը կարգաւորեց և մտքերի երկար փոխա-
նակութեան անելուց յետոյ՝ եկան այն եզրակա-
ցութեան, որ նոր կանօնադրութիւն մշակելու
գործը հարկաւոր է յանձնել Սեդիկ հոգուց բաղ-
կացած մի յանձնաժողովը: Սա միակ և հասկա-
նալի միջոցն է Յանձնաժողովը կարող է աւելի
մօտեց ծանօթանալ խնդրին և մշակելով կան-
օնադրութիւնը, առաջարկել ծիւղականների հա-
ւանութեան: Մենք կարծում ենք, որ կարելի է
դպրոցը պահել ոչ միայն 4 դասարանով, այլ
նոյն իսկ վերածել 6 դասարանին:

Պէտք է ասած՝ օրիորդաց դպրոցը գրաւել է
տեղիս հասարակութեան ընդհանուր ուշադրու-
թիւնը. նրա բուռն ցանկութիւնն է այդ դպ-
րոցը պահպանել ներկայի ծաւալով և եթէ հնար
լինի՝ դարձնել նոյն իսկ 6 դասարանին:

Այդպիսի միջոց հասարակութիւնը փայփա-
յում է շատ վաղուց և եթէ առաջ չը գալին վե-
րոյիշեալ հանգամանքները, մենք հաւատացած
ենք, որ դպրոցը ներկայումս արդէն կունենար
6 դասարան: Աչքը առաջ ունենալով այդ ա-
մենը, մնում է մտածել և մշակել այնպիսի կա-
նօնադրութիւն, որպէս զի հասարակութեան վե-
րոյիշեալ ցանկութեան ճիշդ բաւարարութիւն
տրված լինի:

Կանօնադրութեան վերաբերված խնդրերը լու-
ծելուց յետոյ, ժողովին առաջարկվեց հայթա-
թել միջոցներ առաջիկայ դպրոցական տարին
դպրոցի բնէն յալակաւ լրացնելու համար:
Ժողովը միաձայն վճեց նախկին տարիների
համեմատ տալ եկեղեցիներից այս տարի ևս
2000 բուրջի: Աւելորդ չենք համարում ասել,
որ դպրոցները փակվելուց յետոյ, երբ լուծվեց
եղած հոգաբարձութիւնը, օրիորդաց դպրոցի
տնտեսական մասը մինչև այժմ վարում է կօն-
սիստօրիան, և որովհետև կօնսիստօրիային դեժ-
ւար էր մի այդպիսի ծանր գործի առաջ տա-

նելը, ուստի և այս տարի, համեմատած անցած-
ների հետ, դպրոցը քաշել է ներկական մեծ
նեղութիւն: Այդ դրութիւնից դուրս գալու հա-
մար ժողովը յարմար դատեց, մինչև դպրոցի
դրութեան վերջնականապէս որոշումը, նրա տն-
տեսական մասը կառավարելու համար ընտրել
ժամանակաւոր հոգաբարձութիւն, կանխապէս
ժողովրդական դպրոցների դիրեկտօրի հաճու-
թիւնը ստանալուց յետոյ:

Երկրորդ առարկան երգեցիկ խմբի ապահո-
վութեան հարցն էր: Այդ խնդրը նոր չէ: Նա
քանիցս անգամ խօսակցութեան առիթ է տը-
ւել: Բանը նրանումն է, որ այդ գործը հէնց
սկզբից խախտու հիմքերի վրա է դրված: Խում-
բը ապահովված չէ, նա ունի չէ ստանում: Այս-
տեղից առաջ են գալիս անկարգութիւններ. ով
ուզում է յաճախում է, ով չէ ուզում չէ գալիս:
Ահա այժմ այդ խնդրին գալով՝ ժողովը դտնում
էր, որ հարկաւոր է խումբը վարձատրել, բայց
մի և նոյն ժամանակ վախում էր, որ մի գուցէ
ապագայում եկեղեցու աղատ գումարները հար-
կաւորվեն դպրոցի համար, ուստի և յարմար
դատվեց մի առ ժամանակ այդ խնդրի լուծու-
մը յետաձգել:

Դէպքից օգուտ քաղելով մի քանի խօսք ևս
ասենք մեր եկեղեցիների գումարների մասին:
Մեր եկեղեցիների արդիւնքը տարեցտարի աւե-
լանում է, բայց այդ աւելացած գումարներից
մենք օգտվել չը գիտենք: Իւրաքանչիւր տարի
այդ յաւելումները բարդում ենք մայր գումա-
րին և պահում մեզ միմիջեմ:

Փանի անդամ խօսք է եղել, որ այդ գումար-
ները հարկաւոր է գործարկել լայն կերպով ե-
կեղեցական կարիքների վրա, բայց որովհետև
մեր մէջ խիստ զարգացած է դիւղու ախտը,
ուստի և այդ բարի ցանկութիւնը իր համար
պարարտ հող չէ գտնում: Բացի այդ՝ հեշտու-
թեամբ կարելի էր աւելացնել և եկամուտը, ե-
թէ ձեռք բերվէին կալուածներ: Բայց ում էք
ասում. բաւական չէ, որ ձեռք չէ բերվում ոչ
մի նոր կալուածք, եղածներն էլ կարգի չեն բեր-
վում:

Ահա թէ ինչ խնդրի վրա ուզում ենք դարձնել
հասարակութեան ուշադրութիւնը: Եթէ մի քա-
նի տարի առաջ գլուխ բերվին այդ միջոցնե-
րը, այսօրվան օրը անգոր չէինք մնալ մի
այդպիսի պարզ խնդրի առաջ, ինչպիսին է
ապահովութիւնը:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Թուրքիայի 13-ին

Շուշին իր իննամսեայ թմրութիւնից սթափ-
վելով՝ կամայ-կամայ կենդանութեան շուռչ է
առնում: Ամբողջ տարվայ ընթացքում միայն
ամառվայ երեք ամիսն է, երբ կարելի է լի-
նում այդ քաղաքի գաւառական կենտրոն
դանաճած տնտեսը: Փողոցներում անցողաբձ,
հրապարակում, խանութներում աւետարի նը-
շոյլ, թատրոնում ներկայացումներ, կլուբում
պարերեկոյթներ, տներում հարսանիքներ, խն-
ձոյթներ, և այլն: Սեպտեմբերի վերջերում դա-
դարում է այդ բոլորը և քաղաքը կրկին իր
ճակատագրական մեռած դրութեան է մատն-
վում, —խորին, մեղաւային լուծութիւն գրկում...:

Բագուց և այլ տեղերից ամառանոց եկող-
ների թիւը օրէորդ տաւառում է: Այս տարի
եկտրները մեծ մասամբ նախալին մայրաքա-
ղաքում ապրող շուշեցիների միջին և բանւոր
դասակարգին է: Վճուր-երը վճել են այս տարի
ամառն անցկացնել կովկասեան հանքային ջրե-
րում, ուր ամեն կերպ յարմարութիւններ կան
հազարներ շուայելու, լիկ միմիայն օտարներին
չլացնելու նպատակով...:

Ղարաբաղի «տուղա»-ը իր անձնական բարե-
կեցութիւնը միայն աչքի առաջ ունի: Նրան
ինչ հոգ, թէ ամառվայ ամիսները իր հայրենի
քաղաքում, նրա զովարար և կազդուրիչ կլիմա-
յի տակ անցկացնելով, իր մի քանի տասնեակ
բուրջները այնտեղ ծախսելով, դրանով մաս-
նակի օգուտ բերած կը լինի քաղաքին տնտե-
սական տեսակետից: Նրան ինչ հոգ, թէ գտնու-
վելով հայրենի աղքատ քաղաքում, իր մի քանի
բուրջի նուէրներով կը նպաստէ քաղաքի բարե-
կարգութեան գործին: Իր սփոփել այդ քաղաքի
հարկաւոր թշուառների անել դրութիւնը, կօ-
նարում է որ և իցէ հանրօգուտ... Ե՛, ինչ ենք
կորցրել և ինչ ենք որոնում: Խնչ բարեկար-
գութիւն, ինչ թշուառ, ինչ հանրօգուտ գոր-
ծունէութիւն: Ա՛ւմ են վերաբերում այդ խօս-
քերը, շուշեցի հարուստին, որ Բագուի նեխ-
ված միջնորդում է մնված:

Պուցէ մեզ կառարկեն, մատնացոյց անելով
քաղաքութիւն կազմող մէկ-երկու անհատներին
վրա, որոնք վերջերս, ով գիտէ որ «խաչաչից»

Լէրի հակադրութեան տակ: Այսօր մինչոք ժա-
մի 2-ին ճանապարհ կընկնի դէպի Մայորէնօֆ:
ՆՈՎՈՐՈՍՏՅԱՆ: Աւազակները մէկը, Գեղե-
ջիկի ցեղանոց գործարանի ղեկավարի տան
վրայ յարձակում գործելու ժամանակ, մտնելով
ննջարանը, վերադարձել էր ծառայից: Աւազակ-
ները անհետացան և տարան իրանց հետ վերա-
դարձան, ոչնչից չօգտվելով:
ԲԻՐԻՍԵԼ: Երեկոյեան մի քանի ժողովներ ե-
ղան ընտրողական օրէնքի դէմ, երեկոյեան հա-
մար, որի մասին հետաքրքիրը ասում էին, որ
նա զգուշ է և խախտում է սահմանադրու-
թիւնն ու մարդկանց իրաւունքները: Նրանք յայտ-
արարեցին միայն, որ եթէ օրէնքը ընդունվի,
այն ժամանակ թագաւորը չի հաստատի այդ
օրէնքը:
ԲԻՐԻՍԵԼ: Ժողովից յետոյ, որ գումարվել էր
ընտրողական օրէնքի դէմ, երեկոյեան, 5000
մարդ ցոյց արին քաղաքի այն մասում,
որտեղ գտնվում են կառավարչական հիմնա-
րկւթիւնները: Սաստիկ աղմուկով ջարդեցին
խանութները պատուհանները և փողոցի լայ-
նութիւնները, ժանդարմները վրայ քարեր էին գը-
ցում, որ պոկում էին փողոցների սալաշարակ-
ները: Ժանդարմները հրացաններ արձակեցին
և սուղնեղով քննեցին ամբողջը: Երկու ժա-
նարմ վերադարձան դրոշմը սրբի: Ասում են,
որ շատերն են վերադարձել: Կէս գիշերին մօտ
քաղաքը հանգստացաւ: Ոստիկանութիւնը և քա-
ղաքային զօրքի զօրքի հսկում են գիշերները:
ՊԵՏԵՐԲՈՐԳ: Շատ քաղաքները հեռագիր-
ներ են ստացել գնացողական մարմանը կա-
տարելու մասին Մեծ Իշխանուհի Մարիա Նի-
կոլայեւնայի ծննդեան առիթով:
ԽԱՐԿՈՎ: Երէկ Լիբաւայի կայարանի մօտ
սպանվեց արտէլիկ Սաֆօնով, որը երկաթուղու
գնացքի ընթացքի ժամանակ գուրս գցեց իրան
պատուհանից: Նա 22 տարեկան մի երիտասարդ
է, որը մի քանի ժամանակ առաջ այստեղի Ազով-
Կոնստանտինով քաղաքում յափշտակեց 6000
ռուբլի: Սաֆօնովին գնացքում ճանաչեց բանկի
բաժանմունքում ծառայողներից մէկը, որը յայտնեց
այդ բանի մասին երկաթուղու ծառայողին:
Նկատելով ձեռքակալութեան պատրաստութիւն-
ները, Սաֆօնով գուրս ընկաւ պատուհանից:
Գնացքը ջարդեց նրա գլուխը: Սպանվածի մօտ
գտնվեց ընդամենը 240 ռուբլի:
ՄԱԿԻՐԻ: Ամբողջ Սպանիայում տիրում է
կատարելապէս հանգստութիւն:
ՊԱՐԻՑ: Երէկ դեռ պահ իշխան Ռուսովին
այցելեցին Վալդէ-Բուսոս, գեներալ Գալլիֆէ
և նոր կաբինէտի ուրիշ մինիստրները:
ՊԱՐԻՑ: Իշխան Բարիատինսկի ընտիր հա-
տարակալութեան առաջ երէկ կարդաց մի դասա-
խոսութիւն Պուլկինի մասին, որը մեծ հաւա-
նութեամբ ընդունվեց:
18 յունիսի
ՊԵՏԵՐԲՈՐԳ: Բիւրոսին: Թագուհի Կայսրուհի
Ալեքսանդրա Ֆեոդորովնայի գիշերը լաւ անց-
կացեց: Առաւօտեան ջերմութիւնը—36,6, երե-
կոյեան—37,0. Զարկերակը—72—76 հարուած-
ներ մի րոպէում: Բարձր Նորածինը գտնվում է
կատարելապէս բաւարար դրութեան մէջ:
ՎԱՐՇԱՎԱ: Պոլսոյից հեռագիրը հաղորդում
է, որ պրուսական լեհերի զինուոր օրգանը—
«Дневн. Познанский» հանգանակութիւն բացեց
Ռուսաստանի սովետների համար:
ՍՕՖԻԱ: Ազգային ժողովը, 76 ձայների մեծա-
մասնութեամբ 49-ի դէմ, ընդունեց ֆինանսա-
կան դաշնագրի մասին:
ՊԵՏԵՐԲՈՐԳ: Որովհետեւ չափողից բռնել միսիւնէր
Փլէմինգի սպանողին, այդ պատճառով բրիտա-
նական զործակալը պահանջեց պաշտօնակա ա-
նել Կուէնտաու Նահանգապետին: Այդ պա-
հանջը երկու անգամ մերժեց ցղուն-լի-համէնը:
Կ. ՊՈԼԻՍ: Բ. Իրան մօտ կանգնած շրջան-
ներում հաւատացնում են, որ սերբ-թիւրքական
սահմանի վրայ տեղի ունեցած անցքերի մասին
ուղարկած շրջաբերական յայտարարելով թիւրքաց
գնապաններին հիմնված է Ոսկերի վալիի պաշ-
տօնական հաղորդագրութեան վրայ: Սերբական
թագաւորը—նոյն տեղեկութիւնների համաձայն,
—ցաւակցութիւն յայտնեց սահմանի վրայ տեղի
ունեցած անցքերի առիթով Տէվֆիկ-փաշային և
Բերլինի թիւրքաց գնապանին, որին սուլթանը
յանձնարարեց բանակցութիւններ վարել: Բ.
Իրան պատասխանը սերբական յայտարարին
տեղի կունենայ վաղը:
ԼՕՆԴՈՆ: Այստեղի գերմանական դեսպա-
նութեան մէջ կայացաւ զիպլոմատական նա-
խաճաշ, որին ներկայ էին քաղաքական շատ
գործողներ:

ԲԻՐԻՍԵԼ: Պատգամաւորները ժողով: Երէկ-
վայ անցքերի մասին հարցազնուրդները առե-
լով, սօցիալիստները այնպիսի աղմուկներ յա-
րուցին, որ նախագահը ստիպված էր դադա-
րեցնել նիստը: Այն ժամանակ սօցիալիստական
պատգամաւորները սկսեցին գուրս գալ փողոցը,
ուր ամբողջ աղմուկի ցոյցեր արեց նրանց: Պո-
լիցիան և ժանդարմները սկսեցին ցրվել ամբո-
ղջը, որը աղմուկ էր հանում. սկսվեցին սուղոց-
ներ: Ժանդարմների և ամբողջի մէջ կռիւ սկը-
վեց: Ժանդարմները յարձակվեցին ամբողջի վրայ
հանած սրերով, բայց օֆիցէրները արգելեցին
նրանց: Նիստը վերսկսելուց յետոյ, սօցիալիստ-
ները սկսեցին գնապետել փողոցում տեղի ու-
նեցած տեսարանները դէմ: Ընդմիջումի ժամա-
նակ սօցիալիստ Կոլբո քարձարեց բռնուց-
քով յարձակվեց մինիստր-նախագահի վրայ՝ ա-
ղաղակելով՝ «Անպիտան»: Սաստիկ աղմուկ:
Նիստը փակվեց սօցիալիստների երգերի և սու-
ղոցների մէջ:

ԽՈՒՄԱՐԻ՝ ԱՆԿՊՈՒՆԻՐ ԳԱՆՈՒԹԱՐ	
Հրատարակչին՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ	
ԻՍՏԱՆԿԱ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ	
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	
ԱՆԻՐԿՈՎԱԿԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ	
№ 1 գնացքը: № 3 գնացքը:	
Բազուկի գուրս է գալիս 4 ժ. 15 ր.	գեշ. 12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում առ. 8 ժ. 40 "	Եր. 6 " 38 "
Թիֆլ. գուրս է գալիս " 9 " 10 "	Եր. 7 " 37 "
Բաթում է հասնում Եր. 8 " 32 "	առ. 8 " 12 "
№ 2 գնացքը: № 4 գնացքը:	
Բաթումից գուրս է գալիս առ. 9 ժ. 15 ր.	Եր. 9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում Եր. 8 ժ. 53 "	առ. 9 " 45 "
Թիֆլիսից գուրս է գալիս " 9 " 23 "	" 11 " 32 "
Բազուկ է հասնում Եր. 1 ժ. 04 "	" 6 " 15 "
Գ Ի Լ Ի Ժ Ա Ն Ս Ն Ե Ր	
Հին և նոր համար	
Թիֆլիսից գուրս է գալիս 7 ժ. առ.	9 ժ. առ.
Գեղարքունիք է հասնում Միւրում:	Պատանաւոր
Վրացիկալիկազ հասնում է 7 ժ. 20 ր. Եր.	9 ժ. 20 ր. Եր.
Վ Ե Գ Լ Ի Ժ Ա Ն Ս Ն Ե Ր (հին գնացքը)	
Թիֆլիսից գուրս է գալիս 1 ժ. 5 ր. Եր.	7 ժ. Եր.
Վրացիկալիկազ հասնում է 3 " 25 ր. Եր.	9 ժ. 50 ր. Եր.

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, յունիսի 19-ին, լինելու է ըն-
տանեկան երեկոյ:

Յայտնում եմ ի գիտութիւն իմ
ճանաթների և բա-
րեկանների, որ մայիսի 1-ից Վրացիփոստովում
բաց եմ արել սեփական լուսանկարչական գոր-
ծարան: Հասցէս. Владивостокъ. Фотографъ Сум-
бату Будагянъ. 3—3



Ստաւրապոլեան Նահանգի Սուրբ Խաչ քա-
ղաքի երեք հատ միջնաւան և մի հատ
երեքաւան դպրոցների համար

ՀԱՐԿԱՆՈՐԷ
մի ճեմարանական, կամ թէ՛ Ներսիսեան դպրա-
նոցը աւարտած հայոց լեզուի, մի և նոյն ժամա-
նակ և կրօնի ՈՒՍՈՒՑԻՑ, մօտաւորապէս ութն
հարիւր բոլորի ուսնիկով: Յանկացողները դասե-
րի որոշման և պայմաններին մանրամասնօրէն
տեղեկանալու համար, ներկայացնելով իրանց
ուսուցչական վկայականը և արտօնութիւնը, կա-
րող են դիմել տեղի տնտեսական կառա-
վարութեանը հետեւել հասցէով՝ Въ городѣ Свя-
таго Креста Ставропольск. губерніи Святокрестовск.
обществен. управленіе. (Ե. 5. 2.) 3—3

ԲԺԻՇԿ Զ. Զ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մոր-
թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:
Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ե. 5. 2.) 45—100

Յ. ՔՈԶԱՐԵԱՆՑԻ ՊԱՆՍԻՕՆԸ
(Նիկոյանիկայա փողոց № 19)
Յունիսի 20-ից գնալու է Կօջօր, վերել խճուղուց բարձր, ռուսաց եկեղեցու
մօտ, Դարբաձէի ամարանոցը: Նոյն տեղ սովորեցնում են օտար լեզուներ: 1—1

Ի Ի Ղ Ե Ի Փ Ո Շ Ի
ՊՂՆՁԷ ԻՐԵՂԵՆՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Բ. Կեօյի եւ ընկ. գործարանի Մօսկվայում
Ծախվում է ամեն տեղ և բոլոր յայտնի վաճառականների մօտ: Այդ գործարանի իւրով և
փոխով մաքրած պղնձէ իրեղենները այնպիսի գոյն և փայլ են ստանում, որ նոր ժամա-
նակն էլ չեն ունեցել: Գնելու ժամանակ պէտք է զգոյշ լինել ուրիշ գործարաններում պատ-
րաստած այդ տեսակ իրերից, որովհետեւ վատ յատկութիւն ունեցող իւղի կամ փոշիի
գործածելը, մանաւանդ խոնաւ օդի մէջ լուծված վիէնայի կիրը, շատ հրապուրել է իր
էժանութեամբ և այդ պատճառով էլ շատ յաճախ է գործածվում: Այն ինչ յայտնի է, որ
այդ եղանակով փոխված կիրը բոլորովին կորցնում է իր գօրութիւնը:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ
երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:
Առաւօտեան ստանում են ա տ տ ե ս տ ա տ ն ե Ր:
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տեսութիւն, 2) Առևտրական
Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանու-
թիւն համարչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կա-
նոնադրութիւն և 7) Գեղարքունիք, վատ ձեռքի ուղղելը:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ա-
մենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր
հիմնողի բնակարանում, Սօլալկում, Ալեքսանդր Փրիգօնովի տանը № 9, Սերգեյեւսկայա
և Նազդոնայա փողոցների անկիւնում: Մրցութիւնը և կանոնները կարելի է տեսնալ
ձ Ր Ի ա պ է ս եղը. Մօսկվայից Երևան գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակա-
րանում: Օտարաբաղադրելի դիմում են՝ Тифлис, С. П. Мануэляну. (Է. 2.) 1—25

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
Բ Ա Գ Ո Ւ
ՆՐԱ ԲԱԺԱՆՍՈՒՆԲԸ ԲԻՐԻ-ՀԵՅԲԱԹՈՒՍ
Ս Կ Ե Լ է ի ր գ ո Ր Ծ Ե Ն Ե Ն Ե Ր Ի Ն Ե Ր
Ը Ն Դ Ո Ւ Ն Ո Ւ Մ Է Պ Ա Տ Ո Ւ Է Ր Ն Ե Ր
ամեն սխտեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ
բաշխելու համար՝ չողկաթանների, թորիչների, թուջէ դանակաւ ձուլածքների՝ մինչև
1000 պուղ, դանակաւ պղնձէ ձուլածքների և այլն և այլն: Գործարանի պահեստում
կարելի է գտնել միշտ Բազուկի համար հարկաւոր գործիքներ:
Գործարանի Բիրի-Հէյրաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով
Բիրի-Հէյրաթում:
Պատուէրներ համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արա-
ֆեօօվի, տէլեֆոն № 749), գործարան. տէլեֆոն № 54, կամ Բիրի-Հէյրաթի բաժան-
մունքը՝ տէլեֆոն № 451.
(Ե. 5. 2.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-іe
ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթից:
Ն. հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլս: Մեկնում է Բաթում
միջ՝ չորեքշաբթի, 23 յունիսի 5 յուլիսի ՄԻՆԳՐԵԼԻԱ չորեքուր, նաւապետ ՇԵԼՏ: Ն. այսպէս
չարտնակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գինով:
Ապրանքներ և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճին դիմել ընկերութեան գործակալներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արմիս, Նաբէլէմայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիօնի փող. Թօլապարտովի և Մայսուրաձէ քաղաքապետ: ԲԱԳՈՒՄ—պ. Ս. Կիլդարեանին
Կօլոբակիկանայա հրապարակ: ՆՈՎՈՐՈՍՏՅԱՆ—պ. Մելիքօր Հեքչերօղլերին:
(Ե. 5. 2.) 8—20

Գիւղատնտեսական գործիքներ
եւ մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱՂԱԵԱՆԻ
250 նկարով: Գինն է 50 կօպ.
Գիւղ. Тифлис, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Ե. 5.) 44—50